ջանքեր ընելու տեղ, աւելի լա-  
կընէ եթէ հասարակ տեսակի մը  
ընտիրը գործածէ . գեղեցիկ բրդէ  
շրջազգեստ մը ստորին տեսակի  
մետաքսէ շրջազգեստէ մը նախա-  
մեծար կը համարուի :

Հոգ տանելու է որ ճերմակե-  
զէններն ուրիշ հանդերձներէ ա-  
ւելի ըլլան, նոյնպէս ոտքի աման-

ներուն լաւ ուշադրութիւն ընե-  
լու է որ բարակ և թեթեւ ըլլա-  
լով հանդերձ, հաստատուն ըլլան.  
վասն դի ոտքին պաղը հիւանդու-  
թեան առաջին նախարարն է :

Կրնաս մինչև աստիճան մը տա-  
քէն չվախնալ, բայց չըլլայ որ  
ցուրաը բանի տեղ չդնելիք ընես:  
Տաքը երբեմն նեղութիւն տուող  
բարեկամ մ'է, բայց պաղը միշտ  
վտանգաւոր թշնամի մ'է :

Շատ ծիծաղելի բան մը կ'ըլլայ  
երբ տարիքն առած կին մը գլուխը  
բաց երեւի մարդոց մէջ :

Մաքրութիւնն ալ քաղաքավա-  
րութեան մէջ կը մտնէ, ըստ որում  
քաղաքավարութեան նպատակն է  
իւր նմաններուն հաճելի ըլլալ,  
թողունք որ մաքրութիւնն առող-  
ջութեան ալ հարկաւոր է :

Ինչպէս ամեն ժամանակ առա-  
քինի նոյնպէս ալ ամեն ժամա-  
նակ մաքրուր պէտք է ըլլար Ընկե-

րութեան մէջ ապրող մարդիկ քաջ  
գիտնալու ևն որ մաքրութիւնը  
խիստ ընտիր վկայագիր մ'է :

Ականերուդ լաւ խնամք տալո՞  
ոչ միայն անոր համար որ գեղեց-  
կութիւն մ'ալ անոնք կը կազմին,  
այլ նաեւ անոր համար որ խիստ  
օդտակար են : Զանոնք մաքրելու-  
համար փոշիներ և այլ տեսակ տե-  
սակ նիւթեր գործածելէ զդուշա-  
ցիր . մէջը քանի մը կտոր քափուր  
լուծուած քիչ մը ընտիր օղին ա-  
սոնց ամենուն տեղը շատ աղէկ  
կը բռնէ :

Ականչներուդ ալ հոգ տար,  
այս ըսելէս չհասկնաս թէ մէջը  
մաքրէ ըսելու չափ աղտոտ մար-  
դու տեղ կը դնեմ քեզ, այլ վա-  
յելութեան համար է որ կ'ըսեմ .  
Վասն զի զիշերուան խոշոր դդակ  
մը եթէ զգուշութեամբ դրուած  
ըլլայ, կրնայ ականչներուդ ան-  
շնորհք ծալքեր տալ :

Եղունգներդ շատ երկնցուցած  
մի պահեր, նույի ձեւով կտրէ զա-  
նանք և շաբաթը մէկ կամ երկու  
անգամ լեմոնով շիէ , ասով խիստ  
փայլուն և գեղեցիկ գոյն մը կ'առ-  
նեն :

Եղունգներուն բոլորակիքը բու-  
սած փոքրիկ մաշկերը (Դէման Շըր-  
նովէ) մի քաշեր հաներ, որովհետեւ  
ասկէ պալարներ յառաջ գալով  
մատներուդ տձեւութիւն կուտան  
Սակայն երբ այս մաշկերը բուս-  
նին , բարակ մկրատով կտրելու է:  
Հարկ չկայ ըսելու որ եղունգները  
կրծելէն աւելի կոպիտ և մաքրու-  
թեան դէմ բան չկրնար ըլլալ :

Անշուշտ ոտքերդ գաղջ ջրով  
ստէպ կը լուսա . եթէ ջուրը շատ  
տաք ըլլայ, կ'ուսին և կը կար-  
մրին , եթէ շատ պազ ըլլայ, ներ-  
բաններուն թեթեւ արտաշնչու-  
թիւնը կրնայ դազրի , և ասկէ  
խլութիւն , կուրութիւն և ուրիշ

խօթութիւններ կրնան յառաջ գալ  
Վերջապէս կը յիշեցնենք սա  
մկզբունքը թէ Սաւրութեան էն  
առաջինութիւն Տ'է :



Եկատ-Շնորհի Վրաց Ընդհանրագիս

— 0 —

Շէնք-շնորհք ըսելով պէտք է  
հասկնալ կարգաւորութիւն իւր  
տանը մէջ, իւր վրայ, իւր բոլոր-  
տիքը, իւր գարակներուն մէջ ինչ-  
պէս իւր գործերուն :

Տան մը համար շէնք-շնորհքը  
վայելչութեանց առաջինն է, անով  
է որ կարասեաց ճոխութիւնը կ'ե-  
րեւայ, մինչեւ անգամ շէնք-շը-  
նորհք ըսուած բանը ճոխ կարաս-  
եաց տեղն ալ կը բռնէ :

Շէնք-շնորհքը որչափ կանանց՝  
նոյնչափ ալ արանց հարկաւոր է ։  
Մանկամարդ կին մը որ սրահի

մը մէջ բարձր ձայնով կը խօսի  
կամ տարիքու անձի մը խօսքը կը  
կտրէ, անշնորհք բան մը ըրած  
կ'ըլլայ :

Մանկամարդ կին մը կամ աղ-  
ջիկ մը որ թիկնաթոռներու վրայ  
նստած կը մնան, երբ իրենց մօտը  
տարիքու կիններ աթոռներու վրայ  
նստած են, բոլորովին անշնորհք  
բան մ'ըրած կըլլան :

Կ'ուզէ այր ըլլայ, կուզէ կին,  
հիւանդ չըլլալով բաց կառքի մը  
մէջ ընկողմանիլը (Եան Էան) ան-  
շնորհք բան է :

Նկեղեցւոյ մէջ փսփալ կամ խօ-  
սիլըն անշնորհք բան է :

Կին մը որ իւր եղբայրը, կամ  
մօտ ազգականը չեղող մարդու մը  
հետ ընտանեբար կը խօսակցի ան-  
շնորհք բան մ'ըրած կ'ըլլայ :

Մանկամարդ կին մը կամ աղջիկ  
մը որ էրիկ մարդու մը ձեռք կ'եր-  
կնցունէ (թօթուելու համար) ան-

շնորհք բան մ'ըրած կ'ըլլայ :  
Երբ մէկը իւր տանը մէջ այցե-  
լուներ կ'ընդունի և ինքը աթոռի  
մը կամ բաղմոցի վրայ կը տարա-  
ծուի , իսկատ անշնորհք բան մ'ը-  
րած կ'ըլլայ :

Մէկ կոճակը պակաս շրջադ-  
գեստ մը . չկոճակուած ձեռնողներ,  
կրկունքին (էջ+ճէ) վրայ՝ կրխուած  
կօշիկներ, և այլ ասոնց նման բա-  
ներ կը ցուցընեն որ իայն կինը  
չէնք-շնորհք չունի, այսինքն լաւ  
կրթուած չէ :

Հետեւաբար չէնք-շնորհք ըս-  
ուածը բնաւ հարստութենէ կախ-  
եալ բան չէ . մաքրութեան , թար-  
մութեան և ճաշակի համախմբու-  
թիւնն է . ամեն վիճակի մարդ  
կրնայ համնիլ անոր :

Ինչպէս որ ըսինք , չէնք-շը-  
նորհքը միայն կանանց պարտաւո-  
րութիւնը չէ , արանց համար ալ  
նոյնչափ պէտքի բան է , և չես

սխալիր եթէ . լաւ գաղափար մը  
չունենաս այն մարդուն վրայ , որ  
այս մասին ուշադրութիւն չըներ ,  
կ'ուզէ նէ իւր տանը մէջ ըլլայ :

Տօքթոռի մը տան մէջ երեւցած  
չէնք-շնորհքը այլոց իւր արհեստին  
վրայ ունեցած վատահութիւնը կա-  
ւելցնէ , վասն զի գաղափարաց  
ուղղութիւն կը ցուցընէ :

Եկեղեցական մը եթէ ձեռք թօք  
թուէ , իւր վիճակին ընութեան նըն  
կատմամբ պակասաւոր կը գտնուի :

Պէտք է զիտնալ որ էրիկ մարտ  
դիկ փողոցներուն մէջ այն կա-  
նանց ետեւէն կ'իյնան որոնք կու-  
զեն որ այնպէս ընեն . չէնք-շը-  
նորհքն է որ միշտ այս վանդնե-  
րէն ազատ կը պահէ :

Կին մը , մանաւանդ երբ մինակ  
է , պէտք չէ որ ծիծաղելով , կո-  
տրութելով քալէ . ընդհակառակն  
կը պարտի ծանր և լուրջ դէմք  
մ'ունենալ , և պարզապէս առջեւը

նայիլ, և ոչ թէ մէկը գտնել ու-  
զողի մը պէս աջ ու ձախ, ասկէ  
դատ ոչ շատ արագ քալելու է և  
ոչ շատ ծանր . առաջին պարա-  
գային մէջ թեթեւութիւն մ'ըրած  
կըլլայ, երկրորդին մէջ կրնայ այն-  
պէս կարծել տալ թէ իրեն ընկե-  
րացողի մը կ'ըսպասէ :

Երիկ մարդ մը միշտ քարայա-  
տակին վերի կողմը, այսինքն տու-  
ներուն կողմը կնոջ ձգելու է .  
կինն ալ այս պարագային մէջ կը  
պարտի քաղաքավար կերպով խո-  
նարհութիւն մ'ընել :

Գէշ կատակարանելը բարոյա-  
կան մեծ անշնորհքութիւն մ' է,  
վասն զի պէտք է զիանալ որ կա-  
տակարանութիւնը քաղաքավա-  
րական կանոնաց ենթարկուած է.  
Էրիկ մարդուն, աւելի եւս կնոջ  
ինչ ըլլալը իրենց կատակարանու-  
թիւններէն կրնայ հասկցուիլ :

Մանկամարդ կին մը, մանա-

ւանդ աղջիկ մը բնաւ իրաւունք  
չունին տարիքու կնոջ մը հետ կա-  
տակարաննելու . այսպէս ալ երի-  
տառարդ մը տարիքն առած մար-  
դու ո՞ր վրայ չկրնար կատակա-  
րանել :

Բնաւ ներելի չէ որ մէկը եկե-  
ղեցակա՛ի մը կատականեր ուղղէ,  
մինչեւ անգամ եթէ ուրիշ կրօնքէ  
ալ ըլլայ :

Բարեկիրթ մարդ մը երբէք չը  
կատակարաներ կնոջ մը հետ ,  
կ'ուղէ մանկամարդ ըլլայ, կուղէ  
տարւօք, ուրիշ բան է եթէ անոր  
հետ աղջ ականութիւն կամ խիստ  
մաներմութիւն ունի :

Որդի մը իւր մօր անարդանք մը  
ըրած կ'ըլլայ, եթէ կատակարա-  
նութիւններ ընէ անոր, նոյնպէս է  
նաեւ իւր հօր համար . յոթի գառ-  
տիարակութեան նշան է այս :

Խիստ անվայել բան է իրեն ըս-  
տորակարգեալ անձի մը կատակ-

ներ ուղղել, օրինակի համար ծառայի մը, աղախինի մը, և այլն : Այսպիսի ընտանութիւններ անոնց ակնածութիւնը կը պակսեցնեն : Ասկէ զատ՝ բարեկիրթ անձինք կրնան ուրիշ միջոցներով ցոյց տալ իրենց ստորակարգելոց թէ զանոնք կը սիրեն, առանց անոնց հետ ընտանութեան աստիճաններն իջնելու :

Այսպէս նաեւ ներելի չէ ընկերութեան մէջ իրմէ աւելի բարձր դրից մէջ գտնուող անձի մը կատակարանութիւններ ընել, կրնաց պատահիլ ող կարծր դաս մը տան քեզ :

Խոյնալէս պէտք չէ երբէք տարիքն առած մարդոց հետ մահուան կամ դայն յիշեցնող բաներու վրայ կատակարաննել :

Խիստ անվայել բան է աղջկան մը հետ կատակարանութիւններ ընել ամուսնութեան վրայ : Կան

պարագաներ, որոնց մէջ այս տեսակ կատակարանութիւնները կուտասութիւնն ալ անցնելով անբարոյականութեան սահմանին մէջ կը մտնեն :

Բայց լաւ կատակարաննելը, յարմար տեղը, ճաշակով, նրբութեամբ, իմաստութեամբ կատակարաննելը սիրուն տաղանդ մ' է որ քիչերու յատուկ է և կատարեալ կրթութիւն մը ցոյց կուտայ :

Արդ, քանի որ լաւ կատակարաննելն աւելի դիւրին է բնաւ չկատակարաննել, այս մասին յրենց տաղանդին վրայ շատ վստահ չեղողները լաւ կ'ընեն եթէ զգուշանան :



Մաերմական այցելութիւննը շահնոնի ներքեւ չեն մաներ, ինչու որ այս կարգի այցելութիւննը մտերմութեան աստիճանին կախում ունին. ինչ ընելիքդ դուկ նաև դատել. մաերմական յարաբերութեանց մէջ կանոնը քու ընտրութիւնդ է :

Սակայն արարողական այցելութեանց մէջ այսպէս չէ, կանոններուն ուշ դնել պէտք է :

Եթէ ծառօթներեդ մէկը բարձր պաշտօնի կամ վիճակի մը համաերար ըլլայ, պէտք է որ իսկոյն այցառուն մը կ ամ նամակ մը զրկես. բայց այցելութիւնդ քիչ մը ժամանակ անցնելէ ետքը ըրէ. ասկէ զատ՝ եթէ այն անձին հետ սերտ բարեկամութիւն չունիս. աւելի լաւ կ'ըլլայ որ այցելութեան չեր-

թառ անոր, որպէս զի իրմէ բան մը սպասողի պէս չերեւիս :

Սակայն բոլորովին ասոր հակառակը պէտք է ընել, երբ ծառօթներէդ մէկը ձախողութեան մը կ'ը հանուի կամ պաշտօնանկ կ'ըլլայ, վասն զի՝ այսպիսի պարագաներու մէջ, չուտ այցելութեամբ միանգամայն օրակի ազնուութիւն և քաղաքավարութիւն ցոյց տուած կ'ըլլաս :

Արարողական այցելութիւննել ըշատ կարճ ըլլալու են, գրեթէ քառորդ մը. սակայն եթէ քու հւն ըլլալէդ ութ կամ տասը վայրկեան ետքը ուրիշ այցելու մը գայ, այս առիթով կրնաս մեկնիլ, եթէ կ'ուղես :

Եթէ ամուսնութեան կամ որդենութեան մը համար այցելութիւն մը պիտի ընես, պէտք է որ այդ այցելութիւնը երկրորդ շաբթուն տեղի ունենայ. բայց եթէ

վախճանման մը համար ցաւակցութեան այցելութիւն մ'է , առջիշտրթուն պէտք է ներկայանալ :

Նրբ կ'իմանաւս որ բարեկամներէդ մէկը հիւանդացեր է , պարտաւոր ես իսկոյն այցելութեան երթալու . սակայն երբ չեն խընդրեր քե՞նէ որ հիւանդին քով երթաս , մի պնդեր այս մասին :

Երբ մէկը հիւանդութենէ կ'առողջանայ , իրեն եկողներուն այցելութիւն կը պարափ :

Այցելութիւն մ'ըրած ատենդ , երբ կը տեսնես որ տանը տէրը կամ տիրուհին ուրիշ բանի վրայ մտածելու պէս կ'ընէ , ճարտարութեամբ հրաման խնդրէ մելինելու , մինչեւ անգամ եթէ գալոր հինդ վայրկեան եղած ըյլայ . վասն զի կերեւի թէ որ և է պատճառաւ մը նեղութիւն կուտաս :



ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

— 0 —

Անուրանալի բան մ'է որ նամակի մը ոճէն՝ զայն գրողին դաստիարակութեան , քաղաքավարութեան աստիճանը կ'իմացուի : Ուստի հարկ է որ նամակագիր մը միշտ այս կէտին մտադրութիւն ընէ :

Նամակ մը գրելու համար առաջ ստուարագիր ( մէսջէտէ ) մը շինելու սովորութիւնն աղէկ բան չէ , ինչու որ ասով ջնջած կ'ըլլանք այն ոճին հրապոյրը զոր Աստուած կրնայ մեզ տուած ըլլալ մեզ ստեղծելու ատեն , ըսել կուզեմ թէ զրչին բուն ոգին որտէն բղիսածն է . ուրիշ բան է եթէ նամակը մտերիմներու ուղղեթու չէ :

Ծնդհանրապէս շատ լաւ սովորութիւն մ'է ընդունուած նամակներուն շուտ պատառիանել . վասն զի՝ նախ՝ անմիջապէս պատաս-

խանելը զիւրին կ'ըլլայ , որովհետեւ կարդացած բաներդ մտքիդ վրայ տպաւորութիւն ընելով , ինքնինքդ բոլորովին պատրաստ կ'ըզնեն պատասխաննելու . երկրորդ եթէ ուշացնես , շատ անզամ կը մտնաս թէ գրեյու կարդու քակդէ . տառփ բարեկամաց մէջ ուշափ սրացութիւն կ'ինայ . գործերու մէջ որչափ ուստիներ կը կորսուին , ևն . ևն . Անրջապէս բարեկամութիւնը : քաղաքավարութիւն և շահը կը պահանջնեն չուտ պատասխանել նամակաց :

Սակայն և այնուհետ կան այնպիսի օպարադ աներ , որոնց մէջ յունեմութիւն է օպատասխանը ուշացնել . օրինակի համար երբ կարդացած նամակէդ սաստիկ զայրացած ես : Աէրքի դէմ վէրք մէտալլ քաղաքավարութիւն դէմ մնէ մեղք մը դործել է : Ուստի գրիչը ձեռք առնելէ առաջ պէտք

է սպասել որ արիւնդ պաղի , վասրն զի այն ատեն , եթէ քեզ գըրողը շատ խիստ լեզու մը գործածած չէ , քու դրչիդ մէկ նուրբ կատակարանութիւնը վիրաւորիչ պատասխան : մ' աւելի կը ներդործէ : Խոկ եթէ իրօք յանցաւորէ , բնաւ չես պատասխաններ . որով լուսնիւնը ոչ միայն քաղաքավարական պարաւ մը կ'ըլլայ , ալ այս պարաւը բոլոր գրելիքներէդ հազար անդամ աւելի զօրաւոր կ'ըլլայ :

Խոկէ զատ կրնայ ըլլալ որ նամակելն միտքը լաւ հասկցած չ'ըլլաս , այն ատեն յուրի տրամադրութեան մէջ պատասխաննելովդ , դիմացինիդ առջեւ իրապէս պակասաւոր կը գանուիս :

Խոյնէն նամակէ ճը պաշտուել ըստ է իմաստուն անձ մը : Այս խօսքը քեզի կանոն ըրէ , և ըստ այնով վարուէ :

Տումսակ մը կամ նամակ մը որոշափ ալ հապճէպով գրելու ստիպուած ըլլաս , միշտ անգամ մը գրրածդ աչքէ անցուր . վասն զի դուն ուրէք կը պատահի որ բառ մը կամ կէտ մը մոռցուած չըլլայ , որով կրնայ ըլլալ որ մէկ պարբերութիւնդ չուղած կերպովդ հասկցուի

Նամակ մը պէտք է որ պարզ յստակ և բնական կերպով դրուած ըլլայ : Ընտանեկան , բարեկամական զրերը թղթի վրայ եղած մրտերմական խօսակցութիւններ են . այսպէս՝ ինչպէս որ կ'ընենք կրտկին քով կամ շրջադայութեան մէջ : Վերջապէս զրիչնիս աւելի սեր սրտին մէջ թաթիւելու ենք քան թէ մտքին :

Այսու ամենայնիւ նամակ մը պէտք է ունենայ համառօքութիւնն , պարզանաւունն , յաղախութիւնն , և հարցութիւնն :

Համառօքութիւննք կ'զգուշանամք

։ Յն երկարաձիդ պարբերութիւնն ներէն որոնք կարգացողին տան ջանքն են :

Պարշաճութիւն ըսելով սա կիմանամք թէ նամակը նիւթին , զայն ընդունելիք անձին դրից յարմար ըլլալու է :

Յսդակութիւնն մասին լաւ ուշադրութիւն ընելու է որ մէկ խօսքը կրկին իմաստ չպարունակէ :

Վերջապէս նամակը ճակառք պէտք է ըստայ , այսինքն հինգած , քծաւոր թղթի վրայ դրուած ըլլալու չէ , առկէ զամ՝ գիրն ալ մաքուր ըլլալու է , ինչու որ ըընաւ պէտք չէ մոռնալ թէ ինչ որ է արտասանութիւնը ատենաբանի մը քերնին մէջ , նոյնն է զիրը նամակի մը մէջ . այսինքն ինչպէս որ արտասանութիւնը ունինդրացդ ականջները յոգնեցնելու չէ , նոյնպէս ալ զիրդ կարդացողին աչքերը յոգնեցնելու չէ :

ՀԱՅԿԵՐՈՅԹ ՏԱԼ.

— 0 —

Երբ մէկը կանոնաւոր հացկերոյթ մը տալ կ'ուղէ , պէտք է որ ընկերութեան մէջ ընդունուած սովորութեանց համակերպի :

Այս մասին ամենէն կարեւոր բանը հրաւիրեալները գոն ընելի է : Այս անձը որ իւր բարեկամները կ'ընդունի և անոնց պատրաստուած սեղանին անձնականապէս հոգ չտանիր , բարեկամներունենալու արժանի չէ :

Կերակուրներու և ըմպելեաց ընտրութեան լաւ ուշադրութիւն պէտք է ընել . այսպիսի սրարագայի մը մէջ ճշմարիտ քաղաքավարութիւնը կը պահանջէ որ ճաշը լաւ ըլլայ , ապա թէ ոչ հանդիսականիք շատ իրաւունք կ'ունենան կարծելու թէ հանդիսին տէրը զիրենք հրաւիրած է իւր ար-

ծաթենքնները ցոյց տալու համար : Եթէ սեղանդ և սեղանատունդ փոքր է , շատ մարդ մի հրաւիրեր : Վասն զի եթէ հրաւիրելոց հանդիսաւ ընել չխտաս , տեսակ մը տանջանքի ենթարկելու համար կանչած կ'ըլլաս զանոնք , քանի որ քու պարտաւորութիւնդ է այնպէս ընել որ անոնք ամէն կերպով գոն ըլլան :

Երբ սպասաւորը կ'իմացնէ թէ սեղանը պատրաստ է , տան տիրուհին ինքն իւր ձեռքը կը նուիրէ աստիճանաւ ամենէն բարձր դրից մէջ գտնուող կամ տարիքով ամենէն մեծ անձին , ինդրելով անկէ որ զինքը սեղան տանի : Տան տէրը իւր թեւը կուտայ այն կնոջ , ուրուն ամենէն աւելի յարգանք կը պարտի . շատ անպատեհ բան կ'ըլլայ եթէ իւր թեւը մանկամարդ կնոջ մը տայ երբ տարւօք կիներ կը գտնուին կոչնականաց մէջ :

Առաջ տան տէրը կ'երթայ և  
վերջը տան տիրուհին :

Բայց ճաշէն ետեւ, ընդհակա-  
ռակին, առաջ տան տիրուհին կ ել-  
լէ սեղանատունին և վերջը տան  
տէրը :

Երբ ճաշը վերջանայ, տան տի-  
րուհին եխելով թէւը իւր աջ կող-  
մը նստողին կուտայ . տան տէրը  
և միւս բաղմականք նոյնպէս կ'ը-  
նեն և սրահը կը մտնեն :

Սեղան նստելու ժամանակ հրա-  
ւիրուսլը դժուար միջոց մ' ունին  
անցելիք, այն է թէ չեն զիտեր  
ուր ուղին . սակայն քիչ շատ ապ-  
րիլ իացող անձինք ասոր ալ ճամ-  
բան կը գտնեն թող տալով որ  
տիկայք աղատօղէն առաջ անց-  
նին, բայց այս վերջններն ալ  
պէտք չէ որ սեղանը շրջապատեն  
այնպէս որ նստիլը դժուարանայ :

Ուշադրութեան արժանի կէտ  
մ' ալ կայ. մինչեւ որ տան տի-

րուհին չնստի, տիկնայք նստելու  
չեն, իսկ արք այն ատեն պէտք  
է նստին, երբ իրենց երկու քովի  
տիկնայք նստած են . և քաղաքա-  
վարութիւնը միշտ այսպիսի փոք-  
րիկ բաներու մէջ կ'երեւի :

Օրինակի համար, ճաշի մը հրա-  
ւիրեալ անձի մը համար չափէն  
աւելի ուտելլը կամ պէտք եղածին  
չափ չուտելլը շատ անվայել բան  
է, վասն զի, առաջին պարագա-  
յին մէջ, այսպէս կ'երեւի թէ այն  
անձը իւր տան մէջ պէտք եղա-  
ծին չափ սնունդ չառնուր, իսկ  
երկրորդին մէջ, կընայ կարծել  
տալ թէ եկած կերակուրներուն  
չհաւնիր : Ուստի եթէ 'ի բնէ մնձ  
ախորժակի տէր ես, առնդ կըր-  
նաս քիչ մը բան ուտել : բայց  
այլոց տանը մէջ պէտք է որ քիչ  
մը չափաւոր երեւիս : Եթէ ախոր-  
ժակ չունիս, գացած տեղդ կընաս  
կանխաւ ըսել թէ տկարութիւն

ունիս, և մի սպասեր որ այս յայտարարութիւնը սեղան նստած աւտենդ ընես . բայց եթէ 'ի բնէ ախորժակի կատարեալ պակասութիւն ունիս, մերժէ ճաշի համար եղած ամեն հրաւէր և պատճառն ալ բացէ 'ի բաց լսէ . այն ատեն եթէ գարձեալ պնդեն և դու ալ զիջանիս, ոչ ոք կրնայ զքեզ մեղադրել :

Երբ տան տէրը կամ տիրուհին սեղանին կ'սպասաւորեն, քեզի զրկած բաներնուն վրայ բնաւ դիտողութիւն մի ըներ, և քեզ զրբկուած կերակուրն ուրիշին մի հրամցներ, վասն զի այն ուրիշին քաղաքավարական բան մ'ընել ուղած ատենդ, տան տիրոջ նկատմամբ մեծ անքաղաքավարութիւն մ'ըրած կ'ըլլաս :

Ժամանակաւ միսը մատներով կ'ուտէին, բայց քանի որ այսօր պատառաքաղով կ'ուտեն, պէտք

է զայն ձախ ձեռքով բոնել եթէ միսը կտրուելու պէտք ունի, որպէս զի պատառաքաղը միշտ աջ ձեռքէդ ճախը ասնելու չ'հարկադրուիս :



## ՍԿ ԶԲ ՈՒ ԻՆ Ք

— 0 —

Երջանկութիւնը ու փափաքը միատեղ չեն կրնար ըլլալ :

— 0 —

Ամեն բանի մէջ պէտք է ընենք ինչ որ մննէ կախում ունի, այնուհետեւ պէտք է անյողդողդ և հանդարտ մնալ : Նաւ նստելու պարտաւորեալ եմ . ինչ ընելու եմ: Լաւ ընարել նաւը, նաւապետը, նաւաստիները, եղանակը, օրը, հովը, ահա ասոնք ամենքը

ինէ կախում ունին : Մէկ մ' ալ  
ծովոն պրայ մեծ փոթորիկ կ'ել-  
նէ . այդ իմ գործս չէ , նաւա-  
պետին գործն է : Նաւը ընկղմե-  
լու պրայ է , ինչ ընելու եմ : ԱՌ-  
նեմ ինչ որ ինէ կախեալ է , չեմ  
պօռար կանչեր , չեմ չարչար-  
ուիր : Դիտեմ որ ինչ որ կը ծնի ,  
պիտի մեռնի , ընդհանուր օքնքն  
է այս , ուրեմն պէտք է որ ևս ալ  
մեռն իմ , յաւիտենականութիւն չեմ  
ես . մարդ մ'եմ , բոլորին մէկ  
մառը , ինչպէս որ մէկ ժամը օր-  
ուան մէկ մասն է : Ժամ ոչ կու-  
ռայ և կ'անցնի . ես ալ կուզամ  
և կ'անցնի . անցնելու կերպը ան-  
տա բեր բան է , կուզէ անսդէն ըլ-  
լայ , կուզէ ջուրէն , նոյն բանն է :

— 0 —

Թոշ մահը , աքսորը և ամեն  
սովորի երեւցող բաններ միշտ ա-  
չացգ առջեւ ըլլան , մասնաւորա-

պէս մահը , այն ատեն սնաւ գը-  
ծուձ մտածումներ չես ունենար  
և փափաքներդ կը չափաւորին :

— 0 —

Եթէ առնես այնպիսի դեր մը  
որ քու կարողութիւնէդ վեր է ,  
ոչ միայն դէշ կը խաղաս զայն .  
այլ կը թողոս այն դերը զոր կըր-  
նայիր լաւ կատարել :

— 0 —

Ազքատութիւնը չէ որ զմարդ  
կը վշտացնէ , այլ փափաքը . նոյն-  
պէս ալ հարստութիւնը չէ որ եր-  
կիւդէ կ'ազատէ , այլ բանտուորու-  
թիւնը :

— 0 —

Տղայ մը ձեռքը նեղ բերնով ա-  
մանի մը մէջ կը մացնէ , օրուն  
մէջ կաղին և թուղ կայ . բանն է  
կրցածին չափ անոնցմէ ձեռքին  
մէջ կ'առնէ , բայց չկրնալով ձեռքն  
այնպէս լեցուն դուրս քաշել . կը

սկսի լալ : Տղա՛ն , իւսով լոռջ , և յեւ-  
+ըդ իշխան դրուրս հանել բաւովկան  
լէցան : Դու այն տղան ես . շա-  
տին կը փափաքիս և չես կրնար  
ձեռք բերել . քիչ բանի փափա-  
քէ , և կ'ունենաս :

— 0 —

Եթ յուսաս թէ փափաքած բա-  
ննրդ ձեռք անցնելուդ պէս եր-  
ջանիկ պիտի ըլլաս : Կը սրալիս .  
սնդամ մը որ ստանաս զանոնք ,  
դարձեալ մի և նոյն անհանդստու-  
թեան , մի և նոյն միշտերու , մի  
և նոյն զգուանաց , մի և նոյն վա-  
խերու , մի և նոյն փափաքներու  
մէջ պիտի իյնաս : Երջանկոթիւնը  
ստանալու և վայելելու մէջ չկա-  
յանար , ոչի չխափաքելու մէջ ,  
վասն զի ազատ ըլլոյդ մէջ է եր-  
ջանիւթիւնը :

— 0 —

Այն որ մարդոց կը հպատակի ,  
նախապէս իրերու հպատակած է :  
— 0 —

Վաճէ փափաքներդ ու փա-  
խերդ , այլ եւս քեզի համար բըռ-  
նաւոր չպիտի ըլլայ :

— 0 —

Ամեն բան երկու կողմ ունի  
բռնուելու . մէկ կողմով շատ դիւ-  
բէն կըլլայ զայն կրել , և միւսով  
խստ դժուար : Արդ՝ եթէ եղ-  
բայրդ անիրաւութիւն ընէ քեզ ,  
զինքը քեզ անիրաւութիւն ըրած  
կողմէն մի բռներ , վասն զի այն  
տեղէն ոչ կրնաս բռնել և ոչ ալ  
կրել . այլ միւս կողմէն բռնէ ,  
այսինքն այն կողմէն որ քեզ եղ-  
բայր մը կը ներկայացնէ , մարդ  
մը որ քեզի հետ մեծցած է , և  
այսպէս զինքը լաւ կողմէն բռնե-  
լով , անտանելի ըլլար քեզ նա :

— 0 —

Գնա թշնամալից խօսքեր ըսէ  
քարի մը , ինչ ըրած կրլամ . բը-  
ռաւ չլսեր այն . նմանէ քարին ,  
և քեզ ուղղեալ թշնամանքները  
մի լսեր :

— 0 —

Եթէ մէ յը դալով քեզ իմաց  
տայ թէ աւս ինչ անձը քու վրաց  
գէշ խօսքնը ըրաւ , բնաւ մի յոգ-  
նիր այն ը ուղածները հերքելու ,  
այլ պարզապէս պատասխանէ .  
Այն մարդը որ ինձ համար այդ-  
ախի խօսքեր ըրաւ , անշուշտ չէր  
դիտեր իմ ուրիշ պակասութիւնն-  
երս , վաճն զի եթէ դիտնար ,  
միայն այս չափն ըսելով զոհ չէր  
բլար :

— 0 —

Իմաստուն մարդը չարերէն՝  
ընդունածն աւելի չարիք կ'ըս-  
ուասէ միշտ : Այս ինչ անձը թըշ-  
նամալից խօսքեր ըսաւ ինձ . Մ-

նորհակալ կ'ըլլամ որ զիս չծե-  
ծեց : Զիս ծեծեց . չնորհակալ կ'ըլ-  
լամ որ զիս չիրաւորեց : Զիս վի-  
րաւորեց , չնորհակալ կ'ըլլամ որ  
զիս չ'սպաննեց :

ՀԵՊԻԿՏԵՏԱՑ

— 0 —

Չկայ իշխանութիւն մը որ ծոյ-  
լին գործունէութիւն , շուայլին խօ-  
նայութիւն , գինովին ժուժկալու-  
թիւն կարենայ տալ , մի միայն  
անհատն է որ (ինքնիրեն) կընայ  
ստանալ յօժարութեամբ և անհ-  
ական վորքը զոհողութեամբ :

— 0 —

Աշխատութիւնը ամեն բանի  
յաղթող է :

— 0 —

Կեանքը ոչ հաճոյք մը ոչ ալ  
վիշտ մէշ , այլ ծանր դործ դոր  
վրանիս առած եմք և պէտք է որ

պատուաւոր կերպով վարենք ու  
կատարենք :

— 6 —

Դաւ քեզ օգնէ Աստուած ալ  
քեզ պիտի օդնէ :

— 0 —

Անօնք որ շատ գործ ունին ը-  
նելիք եթէ կամք ալ ունենան  
ժամանակ չի պակսիր բնաւ :

— 0 —

Հարսւստը ստակի միջոցաւ ու-  
րիշները իրեն համար կրնայ աշ-  
խատցնել բայց չի կրնար ուրիշ-  
ները իրեն համար մտածել առաջ  
և իւրաքանչիւր մարդու ինքնի-  
քս տալիք դաստիարակութիւնը  
ոչ մէկ շուկայի մը մէջ չի վա-  
ճառուիր :

~~~~~

ԿԻՐՔԵՐՈՒ ՎՐԱՅ

~~~~~

Միտքն ու մարմինը իրարու-  
հետ այնքան սերտ յարաբերու-  
թիւն ունին , որ ամեն կիրք ա-  
ռողջութեան վրայ ազդեցութիւն  
կը բանեցնէ և մեծամեծ զնաններ  
կը հասցնէ անոր : Մէկդի թող-  
լով զբայական կամ ցանկական  
կիրքերը , բաւական կը համարինք  
քանի մը խօսք ընել բարկութեան  
վախի , տիւրութեան և նախանձու  
վրայ :

Բայէւսէնը մարդուս միտքը  
կը խռովէ , արեան շրջանին տա-  
րապայման արագութիւն մը կու-  
տայ և գործարանաց պաշտօննե-  
րուն կատարումը կը խափանէ :  
Եթէ բարկացողը գօրաւոր կազ-  
մութեան տէր է , վտանգաւոր  
տեսնդերէ կրնայ բռնուիլ . իսկ ե-

թէ տկար ջիղեր ունեցող և վաստառողջ մէկն է, կրնայ յանկարծաման ըլլալ և ուստի թէ՛ մեր առողջութեան սիրոյն և թէ՛ խաղաղութեան սիրոյն համար բարկանալէ և բարկացնելէ զգուշանալու ենք: — Ոիսը այնպիսի ըղոգացում մ' է, զոր շատ անուան չենք կրնար մեր սրտէն ըոլորովն վերցնել, բայց բանականութիւնը միշտ կրնայ օգնութեան հասնել և ոմեղ հանդարտեցնել: Եթէ ուղենք մտիկ ընել վեհանձնութեան ձայնը, նա մեղ կ'ըսէ թէ աւելի պէտք է ներենք քան թէ վրէժխընդիր ըլլանք: Ասկէ զատ՝ մեզմ խօսքերով կրնանք մեր ատելութիւնը գրգռող անձին երեսը վարառնել, այն ատեն այս յանդիմանութիւնը աւելի զօրութիւն կ'ունենայ: Բարկութիւնը մեր միաքը տակնուվրայ ընելով առաւելութիւն կուտայ մեր պազարիւն հա-

կառակորդին: — Կենաց համար հանդարտութիւն և զուարթութիւն պէտ է, բարկութիւնը այս երկուքն ալ կը ջնջէ: Վախ. Վախսկոտ մարդը հարդանուան արժանի չէ: Վախը ոչ միայն կը նուաստացնէ զմարդ, այլ անոր հաստատամտութիւնը, դատողութիւնը, կարողութիւնը կը խիչ կառնէ: Եթէ յանկարծական ըլլայ, կրնայ ջղաձգութիւն և լուսնուութիւն պատճառել: Եթէ սովորական ըլլայ, մարդուս երջանկութիւնն ու հանդարտութիւնը կը ջնջէ: հանդստութեան ժամերը տանջանաց ժամերու կը փոխէ: մարմնոյն կազմական դրութեանը մէջ մեծամիծ խանդարումներ յառաջ կը բերէ, չնչառութիւնը կարգիլէ, մորթը կը պազեցնէ, բազկերակին զարկն անկանոն կ'ընէ, աբեան շրջանը կը կեցնէ, մարսողութիւնը կ'ընդ-

հատէ , մկունքները կ'անդամալուծէ , սառսուներ կը պատճառէ . վերջապէս վախը ծածուէ և մահացուցիչ թոշնի մը բոլոր յափկութիւններն ունի :

Մատաղ հասակէ պէտք է բուժել վախկոտութեան ախտը , և այս ալ դիւրին բան է : Տղան մութ տեղերն առանձին կենալու վարժեցներ . առով սոսկման ամենէն զօրաւոր պատճառներէն մէկը ջնջած կ'ըլլաս : Միայն երկու բան կայ որմէ աղան պէտք է վախնալու վարժուի . այն է չարութիւն ընելէ և ծնողը դժոհացը նելէ :

Ի բնէ վախկոտ մարդ մը կրնայ մինչեւ առտիճան մը ուղղուիլ բանուորութեան ուժով , պատահարաց դէմ , զգոյշ զանուելով , և կամ վտանգին հետ ընդելանալով Գլխաւորապէս երկու տեսակ վախ կայ որ ուրիշ վախերէ աւելի ա-

ղետալի են . մէկն թշուառութեան վահն է . միւսը մահուան + Առաջնին դէմ կ'ենէ յոյս և մասամբ իւֆ կը ջնջ , զայն . վասն զի յոյսը մարդուս բարոյական զօրութիւնը կուելցնէ և կենաց վիշտերը կ'ամօքէ : Սակայն երկրորդը ուժով ըլլալով դիւրութեամբ չի ջնջուիր Ոմանց համար կրօնական զօրաւոր զդացումները կարող են այս վախը փարատելու . բայց այլոց համար կենաց սէրն այնքան սաստիկ է որ բան մը չկրնար այսպիսեաց վախու պականցնել . այս կարդի անձինք իրենց կենաց վախնանը ան ու գոզով կը յիշեն : Ասոնց համար դարմանը զժուար է . խեղճերը մահուան դատապարատած մարդոց պէս ամէն վայրկեան կը կարծեն թէ դահնեցը կուղայ . Այս մարդիկը պէտք է իրենց զարհութելի թշնամոյն հետ ընաւանեցը նել մինչեւ որ կարող ըլլան հան-

դարտ և անտարբեր աչօք անոր  
երեսը նայիլ : Ուստի այսպիսիք  
պէտք է որ զինուորականներու ,  
ծովայիններու , և ասոնց նման  
մահր մօտէն տեսնելով զայն ար-  
համարող մարդոց ընկերութեան  
մէջ մտնեն : Համոզւած ըլլալու  
են որ մեռնիը բան մը չէ , թէ  
կենսական գորութիւննիս ո՛րչափ  
պակսին , այնչափ ալ մեր զգա-  
յութիւնը կը պակսի : Ահա այս-  
պիսի միջոցներով մարդ կարող  
կըլլայ ազատի մահաւան երկիւղէն :

Ուրիշ մարդէ մը վահնալը ինք-  
նինք միանգամացն արհամարհէնի  
և խղճակի ներ է : Ստուգիւ նե-  
րելի է զարհուրելի հակառակորդէ  
մը վախնալ , ասոր լսելիք չու-  
նինք , բայց իւր նմաններէն ըա-  
րոյապէս վախնալ , ասի այնքան  
գձուծ բան մ' է որ վրան խօսիլ  
անգամ չարժեր : Այս ախտին  
դարմանը մարդ իւր անձին մէջ կը

դանէ : Զանք ըբէ ինքզինքդդ ակ-  
նածելի ներու . և խկրոյն պիտի  
տեսնես որ գու ինչ իրաւամբ ու-  
րիշները ռանի տեղ դրած ես նէ ,  
անոնք այ նոյն իրաւամբ քեզ բա-  
նի մը տեղ պիտի դնեն : Վերջա-  
պէս սց ալ սկզնք որ վախին գրւ-  
խաւոր պատճառը չարիքը չափէն  
աւելի մեծցնելին է :

Տիրութեանը կամ վիշտը միւս ա-  
մեն կիրքերւն աւելի կը վնասէ  
մեր առողջութեան և բոլորօվին  
կը խանգարէ զայն փորելով անոր  
հիմք : Նթէ չափազանց ըլլայ , ան-  
դարձնելի կ'ըլլայ և վերջտպէս  
մահ կը պատճառէ : Շատ մարդիկ  
ինքինքնին խմելիքի տալով տրի-  
րութիւննին փարատել կուգէն ,  
բայց այս միջոցն ալ մի և նոյն ա-  
ղեասոյն հետեւանքը կ'ունենայ :

Այս թշնամին վանող միակ  
դարձնաներն են աշխատութիւնը  
կամ ուսու՞ը , զանուզան կրթու-


թիւններ , զքօսանք և մեր բոլոր  
զօրութեան գործադրութիւն : Զը  
մոռնանք նաև ըսել թէ մեր արխի-  
րութեան կամ վատին պատճառը  
չ թէ մեր զդայնութիւնը այլ մեռ  
զապարտ տկարութիւնն է :

Նախանձը սիրոյ ծնունդ եղող  
խիստ կնճռոտ կիրք մ' է որ մար-  
դուս սիրար առելութեան զգա-  
ցումներավ կը լեցնէ , անոր հան-  
դարաւութիւնը բոլորսկին կը վըր-  
գովէ և մարմնոյն առողջութիւնը  
սուկալի կերպով կը խանգարէ :

Կրնոյ պատօնիլ որ մէկը իւր  
կնոջը վոայ անհաւատարմութիւն  
մը տեսնելով քարկանայ , այս բար-  
կութիւնը ներնլի է , բայց նա-  
խանձօտին վիրաւորուելուն պատ-  
ճառը կնոջ կողմանէ ուրիշ մար-  
դուս մը նախապատօւթիւն սորր-  
ուիլն է : Արդարեւ եթէ նախան-  
ձուաշ պիտնար որ այն ուրիշը իրմէ  
սարբին կարգի մարդ մ' է , այն

ատեն կնոջը ճաշակին պակասու-  
թիւնը պիտի ամբաստանէր մի-  
այն , և ուրախ պիտի ըլլար որ  
իւր աչքին այսչափ գծուն երեւ-  
ցող արարած մը այլ եւս չսիրեր  
զինքը : Նախանձու թոյնը հեռա-  
ցնելու համար բաւական է որ  
մարդ հաստատուն բնաւորութեան  
տէր ըլլայ և ինքզինքը յարգէ :

Յուսահագութեանը տիրութեան  
ծայրաղոյն աստիճանն է . նա ե-  
ղեռնացործութեանց ամենէն մե-  
ծին կը մղէ զմարդ : Բժշկութեան  
արուեստը և կրօնքը մէկ հատիկ  
դեղ մը կուտան անոր . յոյս , ա-  
ռանց ասոր կորսուած է նա :



# ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Է

Հայությել պատրաստան

Երբ որ Պարսից Տուղրիլ թագաւորը հայաստան արշաւեց, մեր Հայ նախարարներէն ոմանք կարուց Գագիկ թագաւորին հետ միաբանեցան և անոր դէմ ելան: Ասոնց մէջ էր նաեւ Վանանդացի Թաթուլ քաջ իշխանը, որ նախարարաց շատերուն իշխալէն յետոյ գերի բռնուեցաւ և Տուղրիլին տարուեցաւ: Պատերազմին մէջ Թաթուլ զարկեր չարաչար վիրաւորեր էր Արսուրան Պարսիկ իշխանին որդին, որ Տուղրիլին սիրելին էր. Ըստ անոր Տուղրիլ. «Եթէ պատանին առողջանայ՝ ըգքեղ կ'ազատեմ, իսկ եթէ մեռնի՝ զքեղ անոր զոհ կ'ընեմ: — Եթէ հարուածն իմս է՝ չապրիր» պա-

տանիսանեց աներկիւղ Վանանդացին: Շատ չանցաւ պատանին մեռաւ. Տուղրիլ փոխանակ այնպիսի քաջ մը քովը պահելու՝ վայրենամիտ խօսառւմը վրան կատարեց, զինքը մնոցնել տուաւ և աջ թևը կտրեց Արսուրանին դրկեց ըսելով «Որդիդ վատ բազկէ մեռած չէ:»

— 0 —

Քաջ դադասիան

Կազ Սպարտացի մը պատերազմի կ'երթար. ամէնքն սկսան ըսել թէ այն ձախող վիճակին մէջ երթայ բնչ պիտի ընէ: Քաջ Սպարտացին կը դառնայ անոնց «Իմ միտքս փախչիլ չէ, կ'ըսէ, այլ կենալ պատերազմիլ է»:

— 0 —

Ճարդար յանդիքնանունիչան

Դիմոսթենէս, տիեզերահռչակ Աթենացի ատենարանն, օր մը

հրապարակախօս եղած ժամանակն  
երբ աեսաւ որ ժողովուրդը մտիլ  
չ'ըներ, սկսաւ յանկարծ այս պատ-  
մութիւնը պատմել . «Այսառան  
տաքուն երիտասարդին մէկը էշ  
մը կը վարձէ Աթէնքէն Մէգարա  
երթալու : Կէս օր որ կը լլայ, ե-  
րիտասարդու արեւուն հրատապ  
տաքութենէն ինքինքը պաշտ-  
պանելու համար իշուն տակը կը  
մտնէ , բայց իշապանը չմողուր,  
կ'սկսի հետը կոռուկը ըսնիով որ ես  
քեզի էշս վարձու տուի , շուքը  
չտուի . իսկ երիտասարդը կը պըն-  
դէր թէ էշը վարձելո՞ն նաև շուքը  
վարձեցի : » Այս չափը պատմեց  
Դեմոքրենէս և բնմէն վար իջաւ .  
բայց ժողովուրդը բանեց զինքը  
և մեծ փութով ու հետաքրքրու-  
թեամբ կը հարցունէր թէ վէճն  
ինչպէս վերջացաւ : Յայնժամ վաե-  
մախօս ատենաբանը բարձրացու-  
նելով իւր ահաւոր ձայնն որ Պա-

կեդոնիոյ թագաւորը կը սարսա-  
փեցունէր , դոչեց . «Ո՛վ ասո-  
ուածք , ինամակալը Աթենայ ,  
տեսէք ձեր ժողովուրդն որպիսի  
փութով ու փափաքով կ'ուզէ լսել  
սնոտի ու տղայական պատմու-  
թիւններն և որպիսի ետքերելի ան-  
տարբերութեամբ կ'լնդունի մնը  
հայրենեաց համար տրուած ամե-  
նակարեւոր խորհուրդները :

———— 0 —————

Սուրառէն դժուար ախորժուկ բանալու-

Օր մը հարուստ Աթենացի մը  
Սոկրատի հետ խօսակցելով ըսաւ  
որ ամեննեւին ախորժակ չունի ,  
և կերածէն քնաւ համ չ'առնուր :  
«Հիւանդութեանդ անկրիպելիդ եղ  
մը զիսեմ ես , ըսաւ անոր Սոկ-  
րատ : Քիչ կեր : Կը տեսնես որ  
կերակուրներն քեզի աւելի ախոր-  
ժելի կուգան , ծախօդդ կը քիչնան  
և աւելի առողջ կ'ըլլաս : »

## ԿՈՐԴԵՑԵԱԼ ՄԱՀ



ՆԱՐԺՈՒՄԸ կենաց սկզբունքն  
և անոր նշանն է :

Նարժման ԱՐՍԳՈՒԹԻՒՆԸ կամ  
ԽԱՆՐՈՒԹԻՒՆԸ հիւանդութիւն կը  
պատճառէ և անոր նշանն է :

Նարժման ԸՆԴՀԱՏՈՒՄԸ թըմ-  
րութիւն է, անզգայութիւն է :

Նարժումը ԲՈԼՈՐՈՎԻՆ ԴԱՐ-  
ՐԱՄ ԱՏԵՆ մահ կը նշանակէ :

Ուստի, ամեն անդամ որ շար-  
ժումն ընդհատած է, մահը կար-  
ծեցեալ է, և բայց այս պատճառուն-  
հար չէ շարժումը զերստին հաս-  
տատել :

Մահուան երեւյթներն յան-  
կարծ կամ հիւանդութեամբ մը  
կրնան յայտնուիլ :

Երբ յանկարծ տեղի կ'ունենան,  
միշտ արամադիր են կասկածելի

կարծելու . Թալուկի մը հետեւ-  
անքը կը նկատեն այն երեւյթը,  
և կը ջանան այն վիճակին մէջ ին-  
կողին խելքը դլուխը բերել : Բայց  
և այնպէս, շատ քիչ անդամ կը  
պատահի որ ինչ ինչ պարագանե-  
րու մէջ հարկ եղածին չափ իւլ-  
նամք տանին :

Սակայն, եթէ այն մահուան  
երեւյթները հիւանդութեան մը  
միջոցին տեղի ունենան, շատ քիչ  
անդամ կը պատահի որ այն երե-  
ւյթները ձշմարիտ չկարծեն :  
Շնչառութիւնը դադրելուն կամ  
դադրելու նման երեւելուն պէս,  
բազկի զարկը, սրտի բախիւնը  
չզգացուելուն պէս, աչքն ան-  
թարթ և լուսոյ անզգայ ըլլալուն  
պէս, վերջապէս անշարժ անդամ-  
ները քիչ շատ ձգտում մը ցոյց  
տալուն պէս, հիւանդը մեռած է  
կ'ըսեն, և ալ մէկուն մտքէն չանց-  
նիր անոր խնամք տանիլ :

Սովորաբար շատ քիչ զգուշութիւններ ձեռք կ'առնուին գիտնալու համար թէ այն կարծեցեալ մահը միմիայն թմրութիւն մը չըլլայ. շատ անբաւական միջոցներ կը գործածեն ստուգելու համար թէ այն անձը իրօք ապրելէ դադրան է, և բոլորովին անհնար է անոր խելքը գլուխը բերել:

Դժբաղդաբար այս բարբարոս անհոգութեան զոհ գացող շատեր կը համանք համրել. բայց տակաւին արդեօք նրչափ մեր չգիտցածները կան . . . . . այս գաղափարը սոսկալի է, և մէկ դէպք մը բաւական է հաստատելու թէ անհիմն չէ այն, և պէտք է մարդկութիւնը պարտաւորութիւն դնէ որպէս դի մահը աներկրայ կերպով հաստատելու համար ամեն միջոցներ 'ի գործ դրուին: Կարելի է առանց սոսկալու երեւակայել ընտանիաց հօր մը զարհուրելի վի-

ճակը: Երբ նա սթափելով ինքնուղաղ դադաղի մը մէջ փակուած կը տեսնէ ուրկէ գուլս ելնել անկարելի է իրեն:

Ահաւասիկ մէկ քանի դէպքեր որոնք այլ և այլ ժամանակներու մէջ պատահած են:

Հօրնթէն սեպուհը անզգայ կ'իյնայ, զինքը մեռած կը կարծեն, թաղման հանդէսը կը կատարեն և իւր ընտաննաց յատկացեալ ստորերկրեայ շիրիմի մը մէջ իւր դագաղը (նորուկ) կը դնեն:

Խեղճին անզգայութիւնը կը դադրի, խելքը գլուխը կուգայ, և կը յաջոլի իւր դագաղին կափարիչը վեր վերցնելու. բայց ստորերկրեայ նկուզէն գուրս ելնելու անկարելիութիւնը տեսնելով կը յուսահատի, կը մոլեգնի և գլուխը իւր շիրիմին պատերուն դէմ ջարդական վիրահանաց տանջանաց վախճան կուտայ:

Թաղման հանդէսէն երկու օր  
վերջը , գործաւորք նկուղին մէջ  
կը մտնեն և դրանը մօտ կը գըտ-  
նեն խեղճ սեպուհին արիւնաթա-  
թաւ մարմինը :

— 0 —

Պոնէ տը լա Ռիշառտիէռ տասն  
և եօթը տարեկան հասակին մէջ  
կատարեալ անզգայութեան մէջ  
կ'իյնայ . զինքը մեռեալ կարծելով  
կը պատնեն և յարդի վրայ կը  
դնեն :

Տիւփինեօ կը հասնի այն պա-  
հուն երբ իւր բարեկամին յուղար-  
կաւորութեան պատրաստութիւնը  
կ'ընէին : Տիւփինեօ՝ երեւոյթնե-  
րուն հակառակ՝ չուղէր հաւատալ  
անոր մահուան , պատանքէն հա-  
նել կուտայ զայն և անկողնոյ մը  
վրայ դնել կուտայ . սակայն զինքը  
կենդանացնելու համար գործած-  
ուած բոլոր միջոցները չեն յաջո-

ղիր , և մեռեալ կարծուածը նո-  
րէն կը պատնուի : Տիւփինեօ որ  
իւր բարեկամին մարմնոյն քովէն  
չուղեր հեռանալ , շատ չանցած  
կը նշմարէ որ պատանքին այն  
մասը որ դիակին բերնին դպած  
է , թրջած է : Այս պարագայէն յոյս  
առնելով , դարձեալ մարմինը ան-  
կողնի մը վրայ դնել կուտայ . ջան-  
քերը կը կրկնապատկէ զայն կեն-  
դանացնելու համար , և վերջապէս  
կը տեսնէ որ իւր խնամքները յա-  
ջողութեամբ կը պսակուին : Իւր  
բարեկամն 'ի կեանս կը վերա-  
դառնայ և այսուհետեւ վ սթուն  
և ինը տարի կազրի : Պոնէ տը լա  
Ռիշառտիէռ՝ Ֆոնթընէ-լը-Քոնթի  
(Գաղղիա) մէջ կը մեռնի 1771  
Յուլիս 19 ին , 86 տարեկան : Ե-  
րանի այն մարդուն՝ որ այսպիսի  
վայրկենի մէջ , Տիւփինեօյի պէս  
ջանադիր և անձնուէր բարեկամ  
մը կ'ունենայ իւր քով :

Սպանիացի կին մը շնչառապառըլլալով , մեռած դատուեցաւ . հոչակաւոր անդամադնին մը կանչեցին որ կնոջ մարմինը բանալով զննութիւն ընէ . դանակն առաջին անդամ դարնելուն կինը իւր զդացողութիւնը վնրստին կ'ստանայ և ծիչ կ'արձակէ :

Անդամագնինը կ'ստիսկուի փախչիլ իւր կեանքն ազատելու համար :

Այս իրողութիւնը կ'ապացուցանէ որ վարպետ մ'ալ կրնայ երեւոյթներին խարուիլ : Արդարեայս երեւոյթներն այնչափ սրարիչ են , որ ոչ մարդկութիւն և ոչ ալ զդացում ունենալու է պընդելու համար թէ մահուան ստորդնշաններ կան : Մէկ նշան միայն կայ , այն է նեխութիւնը . ուրիշ բոլոր նշանները ատրակուսելի են և աղետալի սխալներու մէջ կը ձգեն :

Վաճառական մը իւր սպասաւորին հետ Փարիզ կ'երթայ . իւր գործերուն պատճառաւ կը պարտաւորի սպասաւորը Փարիզէն քանի մը փարստի հեռու տեղ մը դրկել : Սպասաւորին բացակայ եղած ատեն , կը մարի , կ'ինսոյ անդգայ . զինքը մեռած կարծելով կը տանին կը թաղեն :

Յուղարկաւորութենէն երկուօր ետքը սպասաւորը կուղայ : Դէալը իմանալով , զ. Շինէլ երէցին առւնը կը վազէ և անոր կ'սէ թէ իւր տէրը խորունկ մարմելքներու ենթակայ է , և անկէ արտօնութիւն կը խնդրէ գերնզմանէն հանելու : Երէցը զայն սոտիկանութեան տեղակալին կը դրկէ , որն որ խնդրած հրամանը կուտայ :

Նոյն թաղին մէկ քանի պաշտօնական անձինք գերեզմանին բացման ներկայ կը դանուիր : Մարզը փոսէն ողջ կը հանուի ,

բայց քիչ մը ետքը կը մեռնի առատ արիւն փսխելով :

Թերեւս դարձեալ կարելի ըլլար այս խեղճ մարդը մեռնելէ ազատել եթէ զինքը գերեզմանէն հանելու հրամանն ստանալու համար ամբողջ օր մը չզոհուէր :

Այսպիսի հարիւրաւոր դէպքեր կրնայինք մէջ բերել եթէ դործոյս անձկութիւնն արգելք չըլլար, և որոնք զօրաւոր կերպով կը հաստատեն թէ անհամար մարդիկ թաղուելէ ետեւ մեռած են : Մահու և կենաց խնդիր մ'է այս, և այս մասին որչափ ուշադրութիւն ըլլայ քիչ է :

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍ

### ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Ամենակարողն Աստուած այնպիսի զօրութիւն մը տուած է երկրիս, որ մեր ասլրելուն և վայելելուն համար պէտք եղող շատ մը բաներ յառաջ կը բերէ . բայց այս բաները առատ չեն գտնուեիր և կամ գործածելու յարմար վիճակի մէջ չեն ըլլար, թէ որ մարդս աշխատութիւն չտայ: Ցուրենը ցանել և հնձել պէտք է . մետաղները գետնէն հանել և գործիք շինել պէտք է . քթանը, բուրդը և բամբակը մանել և հիւսել պէտք է : Ասոնցմով և ասոնց նման գործողութիւններով յառաջ կուգայ մասնաւոր անձանց և աղդաց հարստութիւնը : Ուստի, մարդ մը որպէս զի կարենայ իւր փա-

փաքած ուտելիքն կամ հազնելիքն  
կամ ուրիշ որ եւ է բան մը վա-  
յելելու իրաւունք ունենալ , պէտք  
է որ մարդկային ընկերութեան մէջ  
աշխատութեան մասնակից ըլլայ  
քանի որ մարմնով կամ մտքով  
այնպիսի տկարութիւն մը չունի  
որ աշխատելու անյարմար գըտ-  
նուի , եւ կամ քանի որ արդէն  
իւր կամ ուրիշն վաստակելովն  
այնչափ հարստութիւն չունի որ  
ալ աւելիի չկարօտի :

Երբ ժողովուրդ մը չաշխատիր  
այլ պտուղներով կամ վայրի կեն-  
դանիներով կ'ապրի , վայրենի կը  
կոչուի : Այսպէս են Ամերիկացի  
չնդիկներու , կապրացիներն եւ  
Աւստրալիոց բնիկ ժողովուրդը ,  
Ապրելու եղանակնին շատ թըշ-  
ուառ է . չնորհքով ուտելիք կամ  
հազնելիք չունին . եւ ուտեստի  
նուազութեան դիմադրելու համար  
մթերք չունենալով շատ անդամ

անօթութենէ կը մեռնին շատերը  
Վայրենի երկրի մը մէջ մէկ քա-  
ռակուսի մղոն տեղի վրայ մէկ հո-  
գիէ աւելի հազիւթէ կ'ապրի :

Երբ ժողովուրդ մը աշխատասէր  
է , շատ աւելի լաւ վիճակի մէջ  
կ'ապրի : Եւ որովհետեւ աշխա-  
տասէր ժողովուրդը տուար եւ ոչ-  
խար կը պահէ եւ կը մնուցանէ ,  
ցորեն կը ցանէ եւ կը հնձէ , ի-  
րեն համար բնակարան կը շինէ ,  
եւ օտար երկիրներու բերքերը նա-  
ւերով իւր երկիրը կը բերէ , ուստի  
եւ այնպիսի հաճոյքներ կը վայելէ  
որոց համն անդամ չառներ վայ-  
րենին : Ընդհանրապէս , ժողո-  
վուրդ մը ճիշդ իր աշխատութեանը  
համնմատութեամբ բարեկեցիկ կը լ-  
լայ կամ ոչ : Գերմանացիք , Առ իսք ,  
Գաղղիացիք , Հոլանտացիք , եւ  
Անդղիացիք ամեն աղգէ աւելի  
աշխատասէր են , ուստի եւ վի-

հակնին՝ ընդհանուր առմամբ ա-  
մենէն լաւ է : Այս աղքաց երկիր-  
ներուն մէջ մէկ քառակուսի մղոն  
տեղին՝ հարիւրէն մինչեւ երեք  
հարիւր հոգի կ'իյնայ : Ահա ասկէ  
կ'երեւի թէ այն երկրին մէջ ուր  
աշխատափրութիւնը շատ է, մար-  
դիկ աւելի բազմաթիւ և աւելի  
երջանիկ կ'ըլլան, քան թէ այն  
երկրին մէջ ուր աշխատութիւն  
չկայ :

Անհատներու համար ալ մի եւ  
նոյն բանն է : Այն անձը որ չաշ-  
խատիր կամ իւր ընկերներուն  
կերպով մը ծառայութիւն չըներ,  
կարօտութեան մէջ կ'իյնայ : Բայց  
այն որ կ'աշխատի, շատ կամ քիչ  
աղէկ ասդրելու միջոց կը գտնէ :  
Մարդիկ՝ ընդհանրապէս իրենց ան-  
խոնջ եւ համեստ ըլլալնուն կամ  
չըլլալնուն համեմատ իրենց զբաղ-  
մանցը մէջ յառաջ կ'երթան : Աս-  
տուած ամեն բարի բաներն աշ-

խառութեամբ միայն ձեռք ան-  
ցընել սահմանած է : Եւ այս անոր  
համար որ աշխատութիւնը օդ-  
տակար եւ հաճելի ըլլայ մարդուն  
Չենք կը կըսար առողջ երջանիկ ըլ-  
լայ՝ բայց եթէ մեր միտքը եւ  
ձեռքը բանի մը զբաղեցնելով :  
Բայց պէտք չէ չափազանց ծանր  
կերպով կամ չարաշար աշխատիկ  
վասն դի այն ատեն մեր մարմնոյն  
ոյժը կ'սպառի եւ այնօիսի հի-  
ւանդութեանց կ'ենթարկուինք՝  
որք ծուլութեան հետեւանքէն ա-  
ւելի գէշ են : Կիրակի օրերն ՚ի  
բաց առեալ, օրը ատմն ժամ շա-  
րունակ աշխատիլը մարդուն ա-  
ռողջութեանը յարմար չափն հա-  
մարուած է ընդհանրապէս :

Խաղողը երկար ժամանակ պահելու  
կերպ

Խաղողը երկար ժամանակ պահելու համար, մաքրէ՛ ողկոյզները վիրաւորուած և փտտած հատերէ, և վերջը շարէ՛ հողէ ամանի մը մէջ առանց իրարու դպչելու, ու պարապ տեղերը լից կորեկով (պատը) կամ մարած ու մաղած կիրով (+Երէծ), և վերջը վրան կարդ մը նորէն շարէ ու ծածկէ, և այսպէս հետըզնետէ, և կափարչով լաւ մը դոցէ ամանը : Այս կերպով կրնայ թարմ պահուիլ խաղողը մինչեւ տարի մը :

Սոյն կերպով կրնան պահուիլ տանձ, խնձոր և ուրիշ պտուղներ . իսկ սալորը կրնայ պահուիլ նաեւ ալիւրի մէջ :

— 0 —

Խնձոր ու պանձ պահելու ուրէն կերպ

Խնձորն ու տանձը պահելու ուրիշ կերպ մ' ալ կայ դիւրին և

պարդ : Հաօունցած խնձորն ու տանձը ծառէն զգուշումնեամբ քաղելէն ետեւ այնպէս որ իրարու քսուելով չը վիրաւորին, ու մէջի աղէ կները զատելէն ետեւ դիր երեք չորս օր սենեկի մը մէջ ու վրան ծածկէ յարդով (առան) . Ետքը մէկիկ մէկիկ սրբելով փաթթէ ծծուն բարակ թղթով և դիր սնտուկի մը մէջ կարգ կարգ և լից չոր աւազով :

— 0 —

Հառնէն պահելու կերպ

Կրնաս հազարաւոր հաւկիթ առանց հոտելու պահել, դնելով մարտի ամսոյն հաւկիթները տակառի մը մէջ, և վրան լեցունելով կրաջուր կամ սաստիկ աղի ջուր, մինչեւ որ ջրով ծածկուի . Այսպէս կրնաս ամբողջ տարին պահել ու հարկաւոր եղած ժամանակ գործածել :

## ԶՈՒԱԲՇԱՀԻՔ

Նամակաբանք ունարաւնիւն ճշ

Այսականի տիտարութիւններ  
կան, զօր հանճարեղ անձ մը ըս-  
տակով պիտի դնէր: Այս վաճառ-  
քին ծախու ունեցող մարդ մը իւր  
գիւղին մէջ հոյակապ մատուո մը  
շինել տուաւ և իւր երկու որդւոց  
հետեւեալը զրեց: « Ա երջապէս,  
ոյրելի տղաքս, մեր մատուոին  
շինութիւնն աւարտեցաւ, և յոյս  
ունիմ որ, ամենքս ալ անոր մէջ  
պի ոփ թագւլինք ենէ Աստւած  
մեղի կեանք տայ: »

— 0 —

Երդուաճ ընող Յարշտ

Երկու անձինք, որոց մէկը ե-  
կեղեցական էր, օր մը սրճարանի  
և մէջ կը խօսակցէին: Խօսակցու-

թիւննին ուսման օգուտներուն վը-  
րայ էր: Հարիւրապետ մը դիպ  
ու ածով ասոնց մօտ նստած էր.  
այս մարդը գիտութեանց վլայ ա-  
նոնց ըրած գովեստները լսելէն,  
ձանձրացած, ոտք ելաւ և տա  
քութեամբ ըստաւ անոնց: Աստուած  
կենդանի, ի՞նչ կուզէք, ըսէք,  
թող ևս շան սատակ ելլեմ, եթէ  
պատերազմը աղնուականի մը ար-  
ժանի դպրոցը չէ: Միթէ կը կար-  
ծէք թէ Մալպօրուկ յունարէնով  
և բատիներէնով այնքան ճակա-  
տամարտներ շահեցաւ: Ի՞նչ է ա-  
շակերտ մը երբ դպրոցէն դուրս  
կ'ելլէ: եթէ յիմար մը չէ, աշ-  
խարհք թող երեսս թքնէ: Ճշմա-  
րիտ Աստուած, շատ ուրախ պի-  
տի ըլլայի, եթէ ձեր աշակերտ-  
ներէն մէկը բահակին մէջ տես-  
նէի իւր գոյական անուններովը,  
բայերովը, դերանուններովը և վի-  
լիսոփայութեամբը: ատոր դէմքը

տեսնելու բան էր պաշարման մը  
ճակատամարտի մը մէջ , և . Վը-  
կայ Աստուած . . . : Բայց ըսէք ,  
կաղաչեմ , ըսաւ եկեղեցականը  
ծանրութեամբ , կը յուսա՞ք որ  
ձեր այդ երդումներով երկինքը  
յարձակմամբ առնուք :

———— 0 —————

### Աժանի Տը հաշէւը

Ագան մարդուն մէկը որ օր մը  
ակամայ հացկերոյթ մը կուտար ,  
իւր խոհարարին հետեւեալ հաշիւը  
կ'ընէր :

Սեղանը վեց հողի պիտի նստինք:  
Երբ հինգ հոգւոյ համար ուտե-  
լիք կայ , վեց հոգւոյ համար ալ  
բաւական կայ , այնպէս չէ՞ :

Երբ չորս հոգւոյ համար կայ ,  
հինգ հոգւոյ համար ալ բաւական  
կայ :

Երբ երեք հոգւոյ համար կայ ,

չորս հոգւոյ համար ալ բաւական  
կայ :

Երբ երկու հոգւոյ համար կայ ,  
երեք հոգւոյ համար ալ բաւական  
կայ :

Երբ մէկ հոգւոյ համար կայ ,  
երկու հոգւոյ համար ալ բաւա-  
կան կայ . . . :

Ճշմարիտ է , պատասխանեց խոռ  
հարարը , նաեւ ամէն օր հոս կը  
տեսնեմ որ երբ բնաւ ուտելիք  
չկայ , մէկ հոգւոյ համար բաւա-  
կան կայ , կ'ըսէք :

———— 0 —————

Գինեմոլ մը սեղան նստած էր .  
աղանդերի (չէրէղ) ատեն խաղող  
հրամցուցին իրեն . « Ենորհակալ  
եմ , ըսաւ , մերժելով , ես զինիս  
հառի ձեւով գործածելու ոովորու-  
թիւն » չունիմ : »

———— 0 —————

Քունք շատանով հարդ է ը

Մարդուն մէկը բժշկի մը կ'եր-  
թայ :

— Տոքթոռ , կ'ըսէ , ձենէ դեղ  
մը կը խնդրեմ որ դիս քնացունէ,  
ամիս մ' եղաւ որ աչքերս դոցած  
չեմ :

Բժիշկը դեղ մը կը դրէ մար-  
դուն որ կը պարտաւորի ստկաւիկ  
մի ափին առնուլ :

Հետեւեալ օրը հիւանդը նորէն  
կուգայ :

— Տոքթոռ , կ'ըսէ , ավիտոնը չը  
յաջողեցաւ , ուրիշ քան մը տուէք:  
Բժիշկը քլոոռփոռմ կը դրէ :

Այն ալ չյաջողիր :

Եթեր , մեկոն , ասոնցմէ ալ օ-  
դուտ չտեսներ :

Մարդը միշտ կուգայ , կը տըր-  
տընջայ թէ բնաւ չկրնար քնանալ  
Վերջապէս բժիշկը ճարահատ-  
եալ ըսաւ .

— Ճշարժակ կ'ըսեմ , բարեկամա ,  
որ ալ ուրիշ բան չունիմ քեզի  
տալու , որչափ թմբեցուցիչ դե-  
ղեր որ կան , տուի :

— Սոսկալի բան :

— Բայց ի՞նչ ունիք որ չէք  
կրնար քնանալ :

— Զըսի ճեղ որ մէուկ (թահթա  
պիթի) ունինք :

— 0 —

Հետահրանք համբորդութեան ընող

Ստիպողական գործ մ' ունեցող  
ճամբորդ մը հառլուսուայի մէջ եր-  
կամթուղւոյն կայարանը կ'երթայ ,  
ոյն միջոցին կառքերն ալ նոր  
ճամբայ ելեր էին :

— Բարեւ ճեղ ամենեցուն , կ'ը-  
սէ ներս մտնելով . Եռքըլինի շո-  
ղեկառքին չհասայ , հիմա կուգեմ  
որ հեռագրով երթամ : Ի՞նչ պիտի  
վճարեմ :

Պաշտօնեայք հաղիւ կրցան քըր-

Քիջնին բռնել , մէջերնուն մէկը  
պատասխանեց .

— Սա թիկնաթոռին վրայ նըս-  
աէք , պարոն . հինգ վայրկեանէն  
հեռագիրը ճամբայ պիտի ենէ .

— Ճամբան որչափ պիտի մնամ  
— Երեք վայրկեան :

— 0՚իս , շողեկառքէն առաջ  
պիտի համնիմ : Բայց ի՞նչ պիտի  
վճարեմ :

— Երբ էռքըլին հասնիք , հոն  
կը վճարէք :

Եւ իսկուն բոլոր դրասենեակ-  
ներուն մէջ զանդակիներու հնչիւն  
մը կը լսուի : Մեկնելու նշանն է  
այս , ըսաւ մէկը ճամբորդին . տե-  
ղերնիդ նստէ՛ք : Մարդը ելաւ ,  
և զինքը դարանի (քօլառ) մը քով  
տարին , որուն փեղկը բաց էր

Ներս մտէք , ըսին իրեն , հե-  
ռագրին կառքն է այս . բայց աչ-  
քերնիդ աղէկ գոցեցէք , վասն զի  
եթէ բանաք , արագութենէն գը-

լուխնիդ կը դառնայ և կ'իյնաք :

Մարդը ծռելով դարանին մէջը  
մտաւ , կծկտեցաւ , աչքերը չբա-  
նալու պատուէրը դարձեալ լսեց ,  
յետոյ ողջունելով ըսաւ .

— Աղէկն այն է որ ճամբոր-  
դութիւնը երկար չտեւեր , վասն  
զի այս դիրքին մէջ շատ անհան-  
գիստ եմ :

Ասոր վրայ , դարակը գոցուե-  
ցաւ , և բոլոր զանդակիներն սկը-  
սան նորէն հսչել :

— Ուշադրութիւն , ահա ճամ-  
բայ կ'ելնէք , գոչեցին իրեն դրան  
ետեւէն :

Կէս ժամ ետքը դարակին դուռը  
բացին գոչելով . — Էռքըլին :

— Կարծեմ թէ , ըսաւ ճամբոր-  
դը , իւր թմբած սրունքները դա-  
րակին մէջէն դուրս քաշելով , ե-  
րեք վայրկեանէն աւելի տեւեց  
ճամբան : Ուր պէտք է վճարել :

— Կայարանին դուռը :  
— Շնորհակալ եմ, ըստ, և  
թեւերը ձգտելով դուրս ելաւ :

Մարդուն դէմքը դիտելու ար-  
ժանի բան մ' եղաւ, երբ նշա-  
րեց որ տակաւին Շառլը - Բոււայի  
կայարանը կը դանուէր . բայց ինչ  
ծաղրելի դրից մէջ ըլլան իմանա-  
լով, քաջ մարդու մը պէս զար-  
տեցաւ, և ինըն անձամբ դնաց  
մօտակայ սրճարանը խըր դլառն  
եկածը պատմելու :



## ԵՐԳ

### ՊԱՆԴՈՒԹՅԾ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, Ծիծեռնակ  
Դու գարնան սիրուն թըռչնակ,  
Դէպի ո՞ւր, ինձ ասա,  
Թըռչում ես՝ այսպէս արագ :

Անդ հեռու ալեւոր  
Հայր ունիմ սըդաւոր,  
Որ միակ իւր որդւոյն  
Սպասում է օրէ օր :

Երբ տեսնես դու նորա,  
Խնձնից շատ բարեւ արմ,  
Ասա, թող նստի լայ  
Խւր անբաղդ որդուն վըրայ :


Դու պատմէ, թէ ինչպէս,  
Աստ անտէր ու խեղճ եմ ես,  
Միշտ լալով, ողբալով  
Կեանքս մաշուել, եղել կէս :

Ա՛խ , թըռիր , Ծիծեոն  
Ծընած տեղըս Աշտարակ ,  
Անդ շինիր քո բունը  
Հայրենի կըտուրի տակ :

Ինչ համար ցերեկը  
Մութ է շրջում արենգը ,  
Գիշերը թաց աչքիս  
Բունը մօտ չի դալիս :

Ասիր , որ չի բացուած  
Թառամեցայ միացած ;  
Ես ծաղիկ գեղեցիկ՝  
Հայրենի հողից զրկած :

Դեհ , սիրուն Ծիծեոնակ  
Հեռացիր , թոիր արագ ,  
Դէպ ՚ի Հայոց երկիրը ,  
Ծնած տեղս Աշտարակ :



2002

5311

2013

«Ազգային գրադարան»



NL0033471



2 (059)

f - 44